



**«ԵՐԵՎԱՆԻ ՄԻԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ**



ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

Հայաստան, 0025, Երևան, Կորյունի փ. 2, հեռ. 060621238, 2-38, ss@ysmu.am

**«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳԻՏԱԿԱՆ
ԽՈՐՀՐԴԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 30-Ի ԹԻՎ 17 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏՈՒՄ
ՈՐՈՇՈՒՄՆԵՐ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**


Հիմք ընդունելով «Երևանի Միիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ ԵՊԲՀ) կանոնադրության 55-րդ կետը, ԵՊԲՀ գիտական խորհուրդը, լսելով ԵՊԲՀ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Լ.Ավետիսյանի զեկուցումը, իրավաբանական բաժնի պետ Մ.Սողոմոնյանի, հանրային առողջության ֆակուլտետի դեկանի տեղակալ Գ.Ղավայանի և գիտական քարտուղար Տ.Գ.Ավագյանի հաղորդումները,

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. ԵՊԲՀ ուսումնական աշխատանքները 2018-2019 ուսումնական տարվա համար գնահատել բավարար (19-10-17-01):
2. Հաստատել համալսարանի կրթական բոլոր ծրագրերը՝ դրանցում ներառված փոփոխություններով և կրեդիտային համամասնությամբ (19-10-17-02):
3. Հանձնարարել համալսարանի Ուսումնամեթոդական խորհրդին՝
 - 1) մինչև 2019 թվականի դեկտեմբեր ամիսը մշակել, քննարկել և հաստատել թեստային համակարգի քանակական և որակական ցուցանիշներին առաջադրվող նոր մոտեցումները (19-10-17-03):
 - 2) մինչև 2020 թվականի փետրվար ամիսը քննարկել սիմուլյացիոն կենտրոնների թողունակության և հագեցվածության բարելավման հարցը (19-10-17-04):
4. Հանձնարարել համապատասխան առարկայական մեթոդական հանձնաժողովներին քննարկել՝



- 1) ամփոփիչ ատեստավորման քննությունների վերաբերյալ ուսանողների և դասախոսների կողմից բարձրացված առաջարկություններն ու դիտողությունները, մշակել դրանց բարելավմանն ուղղված մեխանիզմներ և մինչև 2019 թվականի դեկտեմբեր ամիսը դրանք ներկայացնել Ուսումնամեթոդական խորհրդի քննարկմանը (Վիրաբուժության, Թերապիայի և Մանկաբարձության և գինեկոլոգիայի առարկայական-մեթոդական հանձնաժողովներ) (19-10-17-05):
 - 2) «Կենսաբանություն» և «Քիմիա» առարկաներում անհրաժեշտ ծրագրային և անվանման փոփոխություններ կատարելու մասին հարցը մինչև 2020 թվականի փետրվար ամիսը (Տեսական բժշկության առարկայական-մեթոդական հանձնաժողով) (19-10-17-06):
 - 3) Վիրաբուժական առարկաների դասավանդման ձևաչափերի և մեթոդաբանական նոր մոտեցումների մասին հարցը մինչև 2020 թվականի մարտ ամիսը (Վիրաբուժական առարկաների մեթոդական առարկայական հանձնաժողով) (19-10-17-07):
 - 4) ինքնուրույն աշխատանքի և դասախոսությունների նոր ձևաչափերի վերաբերյալ առաջարկությունների մասին հարցը մինչև 2019 թվականի դեկտեմբեր ամիսը (բոլոր առարկայական մեթոդական հանձնաժողովներ) (19-10-17-08):
5. Հանձնարարել Ուսումնամեթոդական վարչությանը՝
- 1) մինչև 2020 թվականի փետրվար-ապրիլ ամիսները կազմակերպել MOODLE ծրագրի վարպետաց դասեր՝ ամբիոնների կողմից այդ նպատակի համար ներկայացված դասախոսական կազմի համար (19-10-17-09):
6. Հանձնարարել կրթության որակի գնահատման և ապահովման կենտրոնին՝
- 1) մինչև 2020 թվականի մարտ-ապրիլ ամիսները բարելավել ներքին և արտաքին շահակիցների շրջանում իրականացվող ուսումնասիրությունների գործիքակազմը, հարցումների պարբերականությունը և ներկայացուցչականությունը (19-10-17-10):
 - 2) ուսումնասիրել և 2020 թվականի մայիս ամսին ՈՒՄԽ-ի քննարկմանը ներկայացնել «Հետազոտության հիմունքները» առարկայի դասավանդման տվյալները (19-10-17-11):
7. Մինչև 2019 թվականի դեկտեմբեր ամիսը դիմել ԵՊԲՀ հոգաբարձուների խորհրդին՝ բազային և հետբուհական նույնանուն ամբիոնների միավորման և ուսումնական ստորաբաժանումներում կառուցվածքային փոփոխություններ կատարելու հարցերով (19-10-17-12):
8. Հաստատել՝
- 1) «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի «Ստուգարքների և քննությունների անցկացմանն ու հանձնման կարգ» կանոնակարգի փոփոխությունները և լրացումները (կցվում է) (19-10-17-13),



բ) «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի «Ամբիոնների և դասախոսական կազմի մասին» կանոնակարգի փոփոխությունը (կցվում է) (19-10-17-14),

գ) «Բուժհաստատությունների կառավարում» մագիստրոսական ծրագրի դասման վարձի զեղչերը (19-10-17-15),

9. Շնորհել անվանական կրթաթոշակներ հետևյալ ուսանողներին (19-10-17-16)

1) Ընդհանուր բժշկության ֆակուլտետ

ա. Խաչատրյան Վահե՝ Մխիթար Հերացու անվան կրթաթոշակ.

բ. Անտոնյան Գայանե՝ Մխիթար Հերացու անվան կրթաթոշակ.

գ. Սարգսյան Անայա՝ Բարդուղիմեոս Ֆանարջյանի անվան կրթաթոշակ.

դ. Հովսեփյան Շուշան՝ Գրիգոր Արեշյանի անվան կրթաթոշակ.

ե. Ղարիբյան Նաթելլա՝ Լևոն Հովհաննիսյանի անվան կրթաթոշակ.

զ. Ավետիսյան Քրիստինե՝ Վահան Արծրունու անվան կրթաթոշակ.

2) Ստոմատոլոգիական ֆակուլտետ

ա. Վլասյան Դիանա՝ Մխիթար Հերացու անվան կրթաթոշակ.

բ. Գաբրիելյան Աննա՝ Ռուբեն Յոլյանի անվան կրթաթոշակ:

10. Հիմք ընդունելով քվեարկության արդյունքները և հաշվիչ հանձնաժողովի արձանագրությունը՝ ինֆեկցիոն հիվանդությունների ամբիոնի դասախոս, բ.գ.թ. Ալվարդ Հուսիկի Հովհաննիսյանին և բժշկական մանրէաբանության ամբիոնի ավագ դասախոս, բ.գ.թ. Գայանե Մեսրոպի Պողոսյանին շնորհել դոցենտի գիտական կոչումներ՝ որոշումները սահմանված կարգով ներկայացնելով ՀՀ ԲՈԿ-ի հաստատմանը (կցվում է) (19-10-17-17):

11. Որոշման կատարման հսկողությունը հանձնարարել ռեկտոր պրոֆեսոր Ա.Ա.Մուրադյանին:

ՆԱԽԱԳԱՀ՝

ԳԻՏՔԱՐՏՈՒՂԱՐ՝

Մուրադյան
Մուրադյան



Բ.Գ.Դ. ՊՐՈՖ. Ա.Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

Բ.Գ.Դ. ՊՐՈՖ. Տ.Գ. ԱՎԱԳՅԱՆ